ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«08» 02 2013թ.

N: 03/11/546-13

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

հեռ. (0312) 5-33-66, ֆաքս (0312) 3-50-77

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԿ-Ի
ԻՐԱՎԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր՝ 05.02.2013 թ. թիվ 193-ի 9 հարցմանը տեղեկացնում ենք, որ ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացված բոլոր հարցումների, այդ թվում՝ էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի Mulberry համակարգի ընձեռած հնարավորությունների սահմաններում:

2012 թվականին պետական ու հասարակական կազմակերպություններից, համայնքներից, փաստաբանական գրասենյակներից, քաղաքացիներից մարզպետարանում ստացվել է 310 հարցում, ինչպես գրավոր՝ առձեռն, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Դրանց մեջ էլեկտրոնային հարցումների և դիմումների թիվը 16 է, որոնք ստացվել և համակարգ են մուտքագրվել shirak.gov.am կայքի <<Դիմեք մեզ>> բաժնից և shirak@mta.gov.am էլեկտրոնային փոստից:

Մարզպետարանը բոլոր հարցումներին ու դիմումներին պատասխանում է սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

կատ.Հ.Հարությունյան
*հեռ. 0312 – 49 - 000 * 110*